ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 38/5

01-ը հունիսի 2019 թվականի

ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա.Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019թ. հունիսի 1-ի թիվ 38 նիստում

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա. Վ. Ցուցուլյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ մասնաճյուղ) արտաքին կապերի բաժնի (այսուհետ՝ ԱԿԲ կամ բաժին) գործունեության իրավական հիմքերը:

2. Սույն կանոնադրությունը հաստատվում և նրանում փոփոխությունները կատարվում են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում:

3. ԱԿԲ-ը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել՝ համաձայն ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության պահանջների:

4. ԱԿԲ–ի կանոնադրության և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության դրույթները:

5. ԱԿԲ-ը ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր կանոնադրությանը համապատասխան ունի գործառույթներ և դրանցից բխող պարտականություններ:

6. ԱԿԲ-ն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի կառավարման մարմինների ընդունած իրավական ակտերով:

II. ԱԿԲ –Ի ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. ԱԿԲ-ի հիմնական նպատակն է ապահովել մասնաճյուղի համագործակցությունը ուսումնական հաստատությունների, պետական և ոչ պետական կառույցների և

կազմակերպությունների հետ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում՝ կրթական, հետազոտական, հասարակական ու մշակութային գործունեության ոլորտներում:

8. ԱԿԲ-ի գործառույթներն են.

1) նպաստել հանրային կապերի միասնական համակարգի զարգացմանը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը,
2) բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը,
3) օգտագործել ԵՊՀ-ի հնարավորությունները ԵՊՀ ԻՄ-ի վերաբերյալ Հայաստանում և այլ երկրներում տեղեկատվական նյութերի ստեղծման և տարածման առումով,
4) զարգացնել ԵՊՀ ԻՄ-ի կայքէջը՝ նպաստելու տեղացի և արտասահմանցի դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը և ուղղորդմանը դեպի մասնաճյուղ,
5) պատրաստել համագործակցության նամակների, գրությունների նախագծեր, որոնք ուղղված են միջազգային և հանրապետական կառույցներին, համալսարաններին,
6) պահպանել մշտական կապ և տեղեկատվության փոխանակում ԵՊՀ ԻՄ-ի և գործընկերների հետ՝ ՀՀ-ում և արտասահմանում,
7) ապահովել մասնաճյուղի համագործակցությունը մասնագիտական լրացուցիչ պատրաստման ու վերապատրաստման դասընթացներ և այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ,
8) ապահովել ԵՊՀ ԻՄ-ի համագործակցությունը և փորձի փոխանակումը Հայաստանի այլ բուհերի նմանօրինակ ստորաբաժանումների հետ:
9) ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել հասարակությանը մատուցվող ծառայությունների մշտադիտարկման համակարգը,
10) մշտական կապ հաստատել և ապահովել համագործակցություն ԵՊՀ ԻՄ-ի և նրա շրջանավարտների միջև,
11) կազմել շահակիցների հետ համագործակցության ծրագրեր և ապահովել դրանց իրականացումը,

12) վարել ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների տվյալների էլեկտրոնային շտեմարանը և կայքէջի համապատասխան բաժինը, շրջանավարտներին տրամադրել տեղեկատվություն աշխատանքի առաջարկների տարբեր հայտարարությունների և մրցույթների մասին,
13) ապահովել մշտական կապ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների, շրջանավարտների և պոտենցիալ գործատուների միջև, շրջանավարտներին ներգրավել ԵՊՀ ԻՄ-ի ծրագրերում,
14) ապահովել հասարակական միավորումների ու այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը, ծրագրել և իրականացնել համատեղ աշխատանքային միջոցառումներ,
15) վերլուծել ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների կարիերային առնչվող հիմնախնդիրները և տնօրենությանը ներկայացնել դրանց լուծմանն ուղղված ծրագրեր, ինչպես նաև ապահովել այդ ծրագրերի իրականացումը,
16) ուսանողների և շրջանավարտների համար կազմակերպել աշխատաշուկայի պահանջների և աշխատանքի որոնման արդի տեխնոլոգիաների ու հմտությունների, մասնագիտական կողմնորոշման և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական ու այլ միջոցառումներ,
17) մշակել հասարակությանը մատուցվող հնարավոր ծառայությունների մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել մասնաճյուղի գործունեության վերաբերյալ գովազդային նյութերը,
18) ընդլայնել և զարգացնել ԵՊՀ ԻՄ-ի ներգրավումը տարածաշրջանային ծրագրերին ու նախաձեռնություններին,
19) ապահովել ինտերնետային կայքի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով նրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները,
20) իրականացնել իր իրավասություններին վերաբերող տեղեկատվական նյութերի հրապարակում, հայտարարությունների կազմում, թարգմանություն,
21) ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքի միջոցով հասարակայնությանն իրազեկել մասնաճյուղի, նրա կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ,

22) ուսումնասիրել միջազգային փորձը և առաջարկներ ներկայացնել մասնաճյուղի գործունեության և կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ,
23) խրախուսել հանրային ծառայությունների մատուցմանն ուղղված գրահրատարակչական գործունեությունը,
24) տարածաշրջանի հանրային պահանջարկին համապատասխան ներկայցնել լրացուցիչ կրթության նոր ծրագրերի առաջարկներ՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը,
25) մշակել և ԵՊՀ ԻՄ-ի կայքում ներկայացնել օտարերկրյա ուսանողների ուսումնառության ուղեցույց, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկություններ,

III. ԱԿԲ –Ի ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. ԱԿԲ-ի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է բաժնի վարիչը՝ իր իրավասությունների սահմաններում, ԵՊՀ ԻՄ-ի և սույն կանոնադրության համաձայն:

11. Բաժնի վարիչը՝

1) կազմակերպում և վերահսկում է բաժնի գործունեությունը, ապահովում է բաժնի հիմնական գործառույթների իրականացումը և լուծում դրանցից բխող հիմնախնդիրները,
2) համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ է տալիս բաժնի աշխատողներին,
3) սահմանված կարգով տնօրինում է բաժնին հատկացված ֆինանսական միջոցները,
4) ստորագրում է բաժնի կողմից պատրաստված փաստաթղթերը,
5) ներկայացնում է բաժինը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, բաժնի անունից հանդես է գալիս այլ կազմակերպություններում,
6) պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար,

7) լուծում է բաժնի կանոնադրությունից բխող և բաժնի գործունեության հետ կապված այլ հարցեր:

12. ԱԿԲ-ի կազմում ներառված են ԵՊՀ ԻՄ-ի հաստիքացուցակով նախատեսված մասնագետները:

13. ԱԿԲ-Ի աշխատակիցների գործառույթները սահմանված են համապատասխան պաշտոնների անձնագրերում: